17 դեկտեմբերի 2010 թվականի N 1134 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 606-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
------------------------------------------------------------------------------------------

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարանի, աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկի և Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանի բաշխման ցանկը հաստատելու մասին» N 606-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1-ին կետում «1550», «480» և «550» թվերը համապատասխանաբար փոխարինել «1555», «485» և «555» թվերով.

2) 2-րդ կետում «400» և «20» թվերը համապատասխանաբար փոխարինել «395» և «15» թվերով.

3) որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի բառարանի, աշխարհագրական անվանումների հայերեն լեզվով էկզոնիմների ցանկի և Հայաստանի Հանրապետության ֆիզիկաաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանի բաշխման ցուցակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 61-րդ կետով.

<<

| | | | | |
|---|---|---|---|---|
| 61. | Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն | 5 | 5 | 5 |

>>.

4) ցուցակի «Ընդամենը» տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ընդամենը | 1555 | 555 | 485 |

>>:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. դեկտեմբերի
Երևան